Բարի նվիրում

ԵՕ դպրոցը սկսեց մեզ մոտ գործել 2021-22 ուս տարուց: Դասապատրաստում, ազատ ծամանց, համայնքային ծրագրեր, էքսկուրսիաներ, ահա ոչ լրիվ ցանկը ԵՕ դպրոցի:

ԵՕ դպրոց ծրագիրը Արցախում սկսեց գործել բարի մարդկանց կամքով:

Մեր դպրոցում այն սկսեց գործել Հայաստան Համահայկական հիմնադրամի Գերմանիայի տեղական մարմնի կողմից:

Այն մեր դպրոց բերեց ոչ միայն երկուանգամյա ճաշ, այլև վերանորոգված և կահավորված դասարաններ, բացվեց ճաշարան և խոհանոց՝ անհրաժեշտ բոլոր պարագաներով:

Դասացուցակով սահմանված ժամից հետո մենք մուտք ենք գործում հետաքրքիր ու հագեցած մի աշխարհ՝ ԵՕ դպրոց: Ճաշ, ակտիվ հանգիստ, ժամանց, հետաքրքիր դիտումներ, գրքերի զարմանահրաշ էջեր, էքսկուրսիաներ, սպորտային մրցումներ: Սա ոչ լրիվ ցանկն է ԵՕ դպրոցի:

ԵՕ դպրոցը նոր ծրագիր է: Պահանջում է նվիրում և տքնաջան աշխատանք:

Դուք այդքան հեռավորության վրա կարողացել եք հույսի շող արթնացնել մեր հոգիներում, մենք էլ կձգտենք լինել այն սերունդը, որն իր ապագան անպայման կերտելու է իր հայրենի երկրամասում, ինչքան էլ դա չուզի թշնամին:

Ձեր բարի գործը մեզ սովորեցրեց նվիրում, հաստատակամտություն և համառություն սկսած գործում:

Շնորհակալ ենք և երախտապարտ:

Ձեր բարին կամեցող ԵՕ դպրոցի սան Թերեզա Խաչատրյան VII դասարան: